

բոլոր կենացը մէջ չիմոռնար զանոնք :
Հայրը այն ատեն կ'ըսէ տղուն . Տեսար
որդեակ , բարեգործութիւն ընելլ , աղ-
քատին օգնելլ ի՞նչ աղէկ բան է . թէ
որ քու կամքիդ հետեւելով ես ալ թո-
զուի երթայի , աս հոգեորական աս-

տուածային զուարճութիւնը ոչ դուն
կ'ունենայիր ոչ ես՝ անոր համար քեզի
խրատ ըլլայ , որդեակ , աս զուարճու-
թենէն ամեննեին մի պակսիր կենացդ
մէջ , որ յաւիտեան ալ զուարճանաս :

ՍԵՐԵԻ ԱՌԱԽՈՏ

ինչպէս մեր ժամանակը չափող օրուան գեղեցկագոյն մասն է Առաւոտն , և
մեր սիրտը փորձող կրից մէջ՝ Սէրն , ասոնց գաղափարաց միութիւնն ալ ամենէն
գեղեցիկ , վսեմ և սրտառուշ մոտածութեանց և զգացմանց առիթ կրնայ ըլլալ
ստոյգ իմաստասէր անձին . սև գիշերէն ծագած պայծառ լուսոյն պէս վառվուոն
իմաստք հոգւոյն կը բղիսեն իրմէ և իր երգարանէն , ըլլայ քնար , ըլլայ ջնար : Նա-
րեկացին իր բարձր քնարաւն կ'երգէ .

« Սէր յառաւոտէն , Սէր յառաւոտէն ճեմեալ իւր անծուկ ծագմամբն .

Ծագումն արեւելք , ծագումն արեւելք անուն այն արուսեկին .

Միթէ յայն ի վայր , միթէ յայն ի վայր վայրի տափող տարածեալ ,
կամ սիրոյ շրջան , կամ սիրոյ շրջան առեալ , աստեղբ բոլորեալ » :

Մեր երշնկացին ալ (կոստանդին) , կ'երգէ իր չափաւոր ջնարաւն , այսպիսի վեր-
նագիր մը զնելով երգոյն , որ է իր վեցերորդ երգն .

Բանք յերկու դէմս մուաց , տեսուրիւնք 'ի հոգի և 'ի մարմին ,
զոր առակօք խօսի այսպէս .

Զարթիք ի յերազուտ , բացէք զաշերտ ով կայք ի քուն .
Տեսէք մէջ գիշերիս շատք՝ որ պահ մի չեն լել¹ ի քուն .

Անդադար ի շուրջ զալով կան հրամանաւ մի Աստուծուն ,

Որ բանիւ զերկինքն ՚ի վեր կամար կապել երետ քամուն² :

Զարթայ ես ի քնոյս , ելայ քամուն կացի պահ մի արթուն .
Երբ էանց գիշերն յերկար՝ նշան եղեւ առաւոտուն .

Տեսի լուսին պայծառ բազում աստեղք ի յիր սպասուն .

Զերկինքն են զարդարել ւ են արարածք իմաստնոյն :

Մի աստղ ելաւ պայծառ առջեւ արուսեկին լուսոյն

Ունէր լոյս գեղեցիկ քան զաստեղացն այլ գերագոյն

1 Զեն եղած 'ի քուն :

2 Երկնկը կամարի պէս շնելով հովուն տուաւ :

Ետես զնա լուսին եւ հըրաման տայ աստեղնոյն .

Հաւասար ի մայր մոտան , նուաղեցան յիրենց լուսոյն :

Զերեսս երկնից երայ՝ երբոր ծագեց լոյսն արեւուն .

Ցղայ երեւեցաւ , քաղցր կոչի իրենն անուն .

Հոգի հաւասար երես ¹ շատոց պայծառ լոյս աշերուն ,

Ով սիրով մնաց լուսոյն արաւսեկին առաւօտուն :

Քաղցր է ծնունդ լուսոյն , երանի տամ ես այն մարդոյն

Որ բաժին ինքն ունենայ ի յայն լուսոյն առաւօտուն .

Թէ դուռն երկնից կայ պարզեւատու մի Աստուծուն՝

Ի ծագելն արեգականն ի մեզ բացվի դուռըն բարոյն :

Թէ Տէրն ի յարարածս հայի քաղցր ի յիր սիրուն ,

Ցայն պահուն է որ լինի նշան լուսոյն առաւօտուն .

Թէ լսէ աղաւանայ եւ աղօթից շատ կարդալուն՝

Ով խնդրէ թէզ ² գտանել զպարզեկն՝ առնու առաւօտուն :

Թէ անուշ հոտ կայ բուրել վի կեանք փոխէ զգուռն մահուն ,

Են շատոց հոգի հարբած յանոյշ հոտոյն առաւօտուն .

Թէ անմահական սէր կայ՝ որ հոգի տայ հոգեստնուն՝ ³

Իմ բաժին սէրն ու հոգին խառնել ի սէրն առաւօտուն :

Թէ ինձ կեանք կամ խնդրութիւն բաժին կայ ի դուռն ի սիրուն ,

Մէկ պահու սէրն ի սրտէ՝ թող լինի ինձ յառաւօտուն .

Թէ հոգի տալ կու պիտի , կամ թէ հոգի հանել մարդուն ,

Նայ յօժար եմ ես հոգով զհողիս փոխան տալ իմ սիրուն :

Ով կամի սիրով լինել ինքն յարութեան որդի լուսոյն՝

Թող խնդրէ ի յայն սիրոյն որ ինք յարեաւ առաւօտուն ⁴ .

Ի սիրուն սէր յաւելու սիրով գնալ տունն ի սիրուն ,

Իով սիրոյն ինք հետեւի՝ հասնի սիրովն առաւօտուն :

Տէր , գթա յիս ի ծառայս եւ տուր բաժին ինձ յայն հոգւոյն .

Որ շատոք ին ⁵ ցանգացել , բայց քիչք հասան առաւօտուն :

Ես յետին եւ անպիտանս որ կոստանդին կոչի անուն

Խնդրեմ ի քէն , տուր ինձ սէր ի սիրուն առաւօտուն :

1 Տուաւ :

2 Ըուտով :

3 Հոգինեղու :

4 Ի Քըխատոսէ՝ որ յարեաւ յառաւօտուն :

5 Ծատերն են փափագեր :